

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ»
ԱՍՈՐԱԿԱՆ ԱԳՔՅՈՒՐՆԵՐԸ

Հայկական մատենագրության հնագույն և ամենաարժեքավոր հուշարձաններից է «Գրիգոր Լուսավորչի վարդապետությունը», որում հատակորեն արտացոլված է հայոց դավանաբանական գիրքորոշումը՝ խարսխված առաքելական ավանդության և ընդհանրական եկեղեցու գաղափարախոսության վրա: «Վարդապետությունը» կազմում է Ագաթանգեղոսի «Պատմության» երկրորդ գիրքը՝ գետնդրված առաջին («Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի») և երրորդ («Դարձ փրկութեան աշխարհիս Հայաստան») գրքերի միջև:

Ինչպես հայտնի է, Ագաթանգեղոսի «Պատմությունը» մեզ է հասել հայերեն, հունարեն և արաբերեն բնագրերով. հունարենը թարգմանված է հայերենից, իսկ արաբերենը՝ հունարենից: Բացի բուն «Պատմությունից» գոյություն ունեն նաև «Գրիգորի վարքի» միջնադարյան մի շարք խմբագրություններ՝ հունարեն, արաբերեն, ասորերեն, լատիներեն, վրացերեն, եթովպերեն և սլավոներեն լեզուներով, որոնք նույնպես ծագում են մեզ անհայտ մի հայերեն բնագրից:

Հետազոտողների մեծամասնության կարծիքով՝ Ագաթանգեղոսի «Պատմության» մեզ հասած հայերեն խմբագրությունը կազմվել է V դարի երկրորդ կեսի սկզբներին, մի անհայտ եկեղեցական հեղինակի ձեռքով, որոշ հնագույն աղբյուրների հիման վրա, որոնցից գլխավորներն են Գրիգոր Լուսավորչի վարքը, Հոսիփսիմյանց կույսերի վկայաբանությունը և Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը: Ագաթանգեղոսի աղբյուրներից են համարվում նաև Աբերկիոսի, Կյուրեղ Երուսաղեմացու վարքերը, Գորիաչի, Շմոնայի, Սանդուխտ կույսի վկայաբանությունները, Բարսեղ Կեսարացու պատարագը և այլն: Ինչ վերաբերում է «Գրիգոր Լուսավորչի վարդապետությանը», որը նույնպես ընդգրկվել է Ագաթանգեղոսի «Պատմության» մեջ, ապա այն միանգամայն ինքնուրույն երկ է՝ նվիրված աստվածաբանության հիմնական խնդիրների քննությանը: Ի տարբերություն Ագաթանգեղոսի բուն պատմության՝ «Վարդապետությունը» մեզ է հասել միայն հայերեն բնագրով: Որպես բացառություն հայտնի է նրա մի համառոտ վրացերեն տարբերակը, վերագրված Հիպոդիտեսին²:

«Վարդապետությունը», որ կառուցված է հայ հասարակությանը, մասնավորապես Տրդատ թագավորին ու նրա արքունիքին ուղղված բանավոր քարոզի ձևով, ընդգրկում է Հին և նոր կտակարանների ողջ բովանդակությունը՝

1 Տե՛ս Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ս. Կանայանց, Տիգրիս, 1909, § 259—715:

2 Տե՛ս Պ. Մուրադյան, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982, էջ 72—111:

սկսած արարչագործությունից մինչև առաքելական քարոզությունը: Սակայն այդ հսկայական նյութը ներկայացված է ոչ թե հանգամանալից փոխադրությամբ, այլ միայն հիմնական դրվագներով, որոնց ներհյուսված են հեղինակի գաղափարներն ու դատողությունները աստվածաբանական այս կամ այն հարցի վերաբերյալ: Համեմատաբար մանրամասնորեն են արծարծված Երրորդության, արարչագործության, մարդկության, առաքելական քարոզության և մեռյալների հարության թեմաները³: Թեև «Վարդապետություն» իրենից ներկայացնում է հիմնականում ուսուցողական, աստվածաբանական-փիլիսոփայական երկասիրություն, որին բնորոշ են ճշգրիտ ձևակերպումներն ու դատողությունները, բայց այն օժտված է նաև գեղարվեստական մտածողության աչքի ընկնող զբր-սևորումներով՝ պատկերավորությամբ, լեզվի հարստությամբ և ոճի վսեմությամբ, որ իր վառ արտահայտությունն է գտել հատկապես մեռյալների հարությանը նվիրված հատվածում⁴:

«Գրիգոր Լուսավորչի վարդապետության» հեղինակային պատկանելության և գրության ժամանակի հարցով հիմնավորապես զբաղվել են Բ. Սարգիսյանը և Ռ. Թոմսոնը⁵: Առաջին հետազոտողի կարծիքով՝ «Վարդապետությունը» գրվել է 425—431 թթ. առաջ Մեսրոպ Մաշտոցի կողմից⁶: Մոտավորապես նույն կարծիքին է նաև Ռ. Թոմսոնը, միայն այն տարբերությամբ, որ նա «Վարդապետության» հեղինակությունը կապում է ոչ թե Մաշտոցի, այլ նրա աշակերտներից մեկի անվան հետ: Երկասիրությունն, ըստ նրա, կազմվել է 440—450 թթ. միջև և իրենից ներկայացնում է աստվածաբանության զարգացման նախահիստոսյան մակարդակը, քանի որ նրանում ամենևին չի նկատվում Եփեսոսի (431 թ.) և Քաղկեդոնի (451 թ.) տիեզերածոցովներում Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների շուրջը ծավալված վեճերի արձագանքը⁷: Ինչպես տեսնում ենք, հետազոտողների կարծիքները համեմատաբար միասնական են «Վարդապետության» ստեղծման ժամանակի հարցում. հուշարձանի գոյությունը V դարի կեսերին, ոչ մի կասկած չի հարուցում⁸:

«Գրիգոր Լուսավորչի վարդապետության» ազդյուրների բացահայտման գործում ևս մեծ ավանդ են ներդրել վերը հիշված երկու հմուտ բանասերները՝ Բ. Սարգիսյանը և Ռ. Թոմսոնը: Աշխատության հիմնական աղբյուրը, բնակա-

³ «Վարդապետության» բովանդակության հանգամանալից վերլուծությունը տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս և իր բազմադարեան գաղտնիքն, Վենետիկ, 1890, էջ 359—408. R. W. Thomson, The Teaching of Saint Gregory. An Early Armenian Catechism. Translation and Commentary, Cambridge, Massachusetts, 1970, Introduction, p. 1—38.

⁴ Տե՛ս Ազաթանգեղոս, Պատմություն..., § 641—658.

⁵ Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 400—408. R. W. Thomson, The Teaching..., p. 36—38.

⁶ Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 400—401: Բ. Սարգիսյանի տեսակետը «Վարդապետության» հեղինակային պատկանելության մասին անվերապահորեն ընդունում է նաև Ն. Ակինյանը, տե՛ս Ն. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ, կիսանքն և գործունեությունը հանդերձ կենսագրությամբ Ս. Սահակայ, Վիեննա, 1949, էջ 161—163: Ն. Պողարյանը վերջերս լույս ընծայած մի գրքույլում «Վարդապետությունը» վերագրում է Կորյունին, տե՛ս Նորայր աբգ. Մովսէսյան, Կորյուն Վարդապետի երկերը, Երուսաղեմ, 1984, էջ 13—23:

⁷ Տե՛ս R. W. Thomson, The Teaching..., p. 36, 38.

⁸ Լ. Աճառյանը, շնորհակալով հանդերձ Մաշտոցի հեղինակությունը, այնուամենայնիվ «Վարդապետությունը» համարում է սոկեղարյան շրջանի հուշարձան, տե՛ս Լ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 329—332:

նաբար, Աստվածաշունչն է, որը բնագրում առկա է ընդարձակ փոխադրութեաններին, մեկնողական վերլուծութեաններին և ուղղակի մեզբերումների ձևով: Հանվանի հիշատակված Լն Մոզսեսի, Յեսու որդի Նավի, Քաղափորութեանց, Յորի, Սաղմոսաց, Իմաստութեան, Ժողովողի, Նսայու, Երեմիայի, Եղեկիելի, Դանիելի, Ամովսի, Միքիելի, Զաքարիայի գրքերը, Ավետարանները, Գործք առաքելոցը և Առաքելական թղթերը: Հաճախ հեղինակը Աստվածաշունչը վկայակոչել է հիշողութեամբ, որ տեղիք է տվել որոշ շփոթութեաններին⁹:

Մասնագետներին կարծիքով «Վարդապետութեանը» գրված է հայրաբանական գրականութեանը հիմնովին յուրացրած մի անձնավորութեան կողմից, քանի որ նրա երկում լայն արձագանք են գտել եկեղեցու հայրերի կողմից մշակված բազմաթիվ տեսական դրույթներ: Ըստ Ռ. Քոմսոնի՝ հայ վարդապետը մեծապես օգտվել է Հովհան Ռսկերերանի աշխատութեաններից և մանավանդ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկից, որը նրա համար փաստորեն որպես վարդապետութեան նմուշ է ծառայել¹⁰: Բ. Սարգիսյանն իր հերթին մատնանշում է բազմաթիվ ընդհանրութեաններ մի կողմից՝ «Վարդապետութեան», մյուս կողմից՝ Բարսեղ Կեսարացու, Եփրեմ Ասորու, Գրիգոր Նազիանզացու, Կյուրեղ Աղեքսանդրացու և հատկապես Հովհան Ռսկերերանի գործերի միջև¹¹: Ինչ վերաբերում է այդ գործերի լեզվին, ապա, ինչպես ենթադրում է Ռ. Քոմսոնը, հեղինակը հավանաբար տիրապետել է հունարենին ու ասորերենին և հաճախ ուղղակի օգտվել այդ լեզուներով գրված աղբյուրներից¹²: «Վարդապետութեան» անգլերեն թարգմանութեան յուրաքանչյուր պարբերութեան ծանոթագրութեաններում Ռ. Քոմսոնը աշխատել է հնարավորութեան սահմաններում պարզել հայ հեղինակի օգտագործած աղբյուրները կամ պարզապես ընդհանուր տեղիներ ու դուգահեռներ գտնել հայրաբանական գրականութեան դանազան հուշարձաններում:

Բոլորովին շահավակնելով տվյալ հարցում սպառիչ խոսք ասելու, ստորև նշում ենք Բ. Սարգիսյանի և Ռ. Քոմսոնի կողմից շնկատված կամ բավարարչափով չպարզարանված որոշ բնագրական ընդհանրութեաններ «Գրիգոր Լուսավորչի վարդապետութեան» և ասորերենից կատարված մի շարք հայերեն թարգմանութեանների միջև¹³: Շարադրանքի հարմարութեան թելադրանքով այդ ընդհանրութեանները ներկայացնում ենք «Վարդապետութեան» պարբերութեանների հերթագայութեան կարգով:

* * *

«Վարդապետութեան» 263—266 պարբերութեաններում հեղինակը քննում է մարդու աստվածանմանութեան հարցը: Երևելի արարածների մեջ ամենամեծ պատիվը տրված է մարդուն, որն Աստու կողմից իշխան է կարգվել ողջ աշ-

⁹ Հմմտ. R. W. Thomson, The Teaching..., p. 3).

¹⁰ Նույն տեղում, էջ 32—34:

¹¹ Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 365—392:

¹² R. W. Thomson, The Teaching..., p. 35.

¹³ «Վարդապետութեան» ասորական աղբյուրների մասին ամբողջական պատկերացում տալու համար որոշ դեպքերում բերում ենք նաև Բ. Սարգիսյանի և Ռ. Քոմսոնի նշած բնագրական ընդհանրութեանները, ինչպես, օրինակ, 282, 424, 433 և 468 պարբերութեաններում:

խարհի վրա, և մյուս բոլոր արարածները պարտավոր են ծառայելու նրան: Մարդը հրեշտակների նման օժտված է անձնիշխանությամբ, ազատ գործելու կամքով, մինչդեռ մյուս արարածները շարժվում են Աստուծու հրամանով, մեկ անգամ ընդմիջտ նրա գծած ուղիով: Անձնիշխանության և բոլոր երևելի արարածներից վեր դասվելու այս շնորհն է, ահա, որ մարդուն նմանեցնում է Աստուծուն: Ուստի միայն այս իմաստով պետք է հասկանալ «Արասցու՛ր, ասէ, մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան» նախադասությունը¹⁴, որովհետև, գրում է հեղինակը, «ըստ որո՞ւմ պատկերի արդեօք ասիցէ, և կամ ըստ որո՞ւմ նմանութեան զմարդն առնել. քանզի անեղծական, անստեղծական, անտարրական, իսկական աստուածութիւնն ճանաչի» (§ 263, 266): 264-րդ պարբերության մէջ աստվածամանությունը բացատրվում է նաև մարդուն վիճակված գիտության շնորհիվ. «զի զգիտութիւն Տեառն ի մէջ անցուցեալ, նորա գիտութեամբ զնորա արարածս ճանաչել՝ նորա նման անուանեցաւ»: Այս մտքերը թեև ոչ նույն հաջորդականությամբ ու ձևակերպումներով, համարյա ամբողջապես գտնում ենք Եփրեմ Ասորու «Արարածոց մեկնության» մէջ: Հմմտ.

Վարդապետութիւն Ա. Գրիգորի

§ 263. Որ յառնելն զմարդն՝ սքանչելագոյն կարգաւ զիշխանն ի մէջ անցուցեալ, և անդ է տեսանել սքանչելիս և զարմանալիս և անհասական հրեշտակակերպս: «Արասցու՛ր, ասէ, մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան»: Իսկ արդ՝ ըստ որո՞ւմ պատկերի արդեօք ասիցէ, և կամ ըստ որո՞ւմ նմանութեան զմարդն առնել. քանզի անեղծական, անստեղծական, անտարրական, իսկական աստուածութիւնն ճանաչի: Ո՞րպէս լինելոցն արդեօք էականին հանգոյն առնոյր լինել, կամ հողն սակաւիկ՝ ինքնարուն զօրութեանն Աստուծոյ, որ և անտեղեօք և անշափակալ վայրօքն, անսկզբնական լիութիւնն անմատոյց յումերէ ունի մըշտընչենաւոր նոյն պարզական և անշարժական միապէս:

§ 264. Իսկ արդ՝ ո՞րպէս ստեղծականին զինքն օրինակ զնիցէ, և կամ զկան զրօշեալ՝ Աստուծոյ պատկերուն ձևիցէ. զոր և ասէն իսկ, թէ «Ըստ պատկերի Աստուծոյ արար զնա»: Նախ ասաց բանս յառաջասաց պատմութեան հանդերձելոցն, ապա անց յառաջակայսն, և ի լինելոցսն նշմարեցուցանէ: Եւ են որ անդէն իսկ մօտայուտ առաջոյ՝ ի նոյն ի նմին ժամանակի զէմ յանդիման ցուցանէ. զի տէր ըստ պատկերի Աստուծոյ արար զնա: Մի՛ վասն իմաստութեան, բանաւորութեան, խելամտութեան, կենդանութեան, հոգե-

Եփրեմ, մեկնութիւն Աբաբաձոց

Եւ զի ասէ՝ «Ըստ պատկերի կերպարանաց մերոց», ըստ նմանութեան պատկերի կերպարանաց իշխանութեանն ասէ. զի որպէս իշխանութիւնն Աստուծոյ ի վերայ ամենայնի, սոյնպէս և տէրութիւնն Ադամայ ի վերայ ամենայնի եղաւ: Մեկնէ բանն որ զկնին ասաց. «Իշխեսցեն, ասէ, ի վերայ ձկանց ծովու և զազանաց երկրի և թռչնոց երկնից և ի վերայ անասնոց և ի վերայ ամենայն երկրի»: Արդ արար զնա զլուխ և առաջնորդ խօստն ի վերայ այնոցիկ՝ որ առանց բանից են. և զայն որ իմաստութեամբն գիտութեամբ էր ի վերայ այնոցիկ՝ որ ի բանութիւն. զի նա վարիչ և առաջնորդ անձին իւրոյ լեալ էր, և իմաստութեամբ անձնիշխանութեան

ւոր շնչոյն, զոր շնորհնաց առաւելութիւն՝
գիտել ճանաչել իմանալ և ի միտ անուշ
զամենայն շնորհաց դաստուածակիր գաս-
տուածատուր իմաստութիւնն և զբանաւո-
րութիւնն, գաստուածածանօթութիւնն և
զպետութիւնն, և իշխել ի վերայ ամենայն
երկրաբուզի երկրածին ստեղծուածոցն, և
զգիտութիւն յառաջգիտութեանն, և կացոյց
զնա տէր ամենայնի: Եւ ասաց Աստուած,
Թէ «Ամենայն բազդրաբուզի սերմանիք
երկրի՝ ձեզ լիցի ի կերակուր»: Եւ ապա
զամենայն զազանս և զանասունս և զթռ-
չունս ածեալ առաջի մարդոյն Հնազան-
դէր: Իսկ ապա աստուածակիր իմաստու-
թեամբն խելամանալ՝ ճանաչել ըստ իւ-
րաբանչիւր ըստ առանձնային կերպա-
րանաց զանունն նշմարեցուցանել, զի
զգիտութիւն Տեառն ի մէջ անցուցեալ,
նորա գիտութեամբ զնորա արարածս
ճանաչել՝ նորա նման անուանեցաւ:

§ 265. Եւ մի՛ վասն այսորիկ ասե-
նման, վասն անձնիշխանական կամացն
իշխանութեան: Զի յԱստուծոյ յամենա-
զործութեանն և ամենարարութեանն երկու
արարածք պատուականք և արգոյք եղեալք
ի բարերարէն Հաստատեցան, մարդիկ և
Հրեշտակք: Արդ՝ զմարդիկ թողեալ ի կամս
անձնիշխան կամաց, վասն զի իւրովը
կամօք անձնիշխանութեանն գիտացել ընդ
բարեացն զործոց՝ շնորհս գտանել ի
բարերար Տեառնէն և յԱրարչէն. և եղեալ
առաջի նորա զգիտութիւն պատուիրանաց
Հաճոյիցն Աստուծոյ, զի գիտացել խոյս
տալ ի շարէն, և զբարին ընտրել իւրոց
կամացն յաւութեամբ, իբրև լինբան քա-
չութենէ, իւրով անձնիշխան կամօք՝
յԱրարչէ անտի գիւրոց վաստակոց առեալ
զփոխարէնս պատուեսցէ:

§ 266. Իսկ վասն նմանութեանն իմա-
նալի է այսպէս. զի ամենայն արարածք
ընդ Հնազանդութեամբ ծառայութեան են
Հարկեալք. զի մի՛ այլ աւելիս ինչ իշ-
խանցեն զործել քան զայն, որչափ ինչ
նոցայն հրամայեցաւ՝ Հարկք եղան ի վե-
րայ իւրաբանչիւր՝ կատարել զհրամանս
Բայց Աստուած զմարդն միայն բազմա-
պատիկ փառաւորեաց և մտօք մեծացոյց
Հոգեխառն հրեշտակակիցս խոնարհագոյն:
արար:

իւրոյ եղև վարիչ այնոցիկ՝ որ լիւրեանց
բնութիւն կացեալ են. յայսմիկ անուա-
նեցաւ. նա ըստ նմանութեան պատկերի
կերպարանաց Աստուծոյ: Եւ զի ի ստեղ-
ծուած ձեռաց Աստուծոյ կոչեցաւ, վասն
պատուի փառաց մարդոյն ասաց. Թէպէտ
է ի պատմել զրոցն՝ ասաց թէ առ Հոգ և
ստեղծ զնա: Զի սովորութիւն է զրոց զկա-
մելն Աստուծոյ՝ զործ ասել. որպէս այն
զի ասէ, մարդ պատկեր Աստուծոյ է. ոչ
զբնութիւն ասէ, այլ զիշխանութիւն աղա-
տութեան նորա ասաց կերպարան. և որ
զկնի ամենեցուն արար զնա, զի մի՛
կարծիցէ մարդն, Թէ իւր իցէ արարչու-
թիւնն¹⁵:

15 «Յրբոյն Եփրեմի մատենագրութիւնք», հ. 1, Վենետիկ, 1836, էջ 7:

* * *

282-րդ պարբերութիւնը նվիրված է Մենդոց գրքի Գ, 9—10 համարների մեկնութեանը՝ «Եւ կոչեաց Տէր Աստուած զԱդամ և ասէ ցնա՝ Ո՞ւր ես: Եւ ասէ՝ Լուայ զձայն քո ի դրախտի աստ և երկեայ, քանզի մերկ էի, և թաքեայ»: Ըստ «Վարդապետութեան»՝ Աստված շի կամենում հանկարծակիի բերել մեղանշած Ադամին, այլ իր ոտնաձայնով հուշում է, որպէսզի վերջինս ինքնակամ կերպով խոստովանի իր մեղքը և փրկութեան արժանանա: Ինչպես ցույց է տվել Բ. Սարգիսյանը, այս հատվածում նույնպես «Վարդապետութեան» հեղինակը հետևում է Եփրեմ Ասորու «Արարածոց մեկնութեանը»¹⁶: Հմմտ.

Վարդապետութիւն Ս. Գրիգորի

Եփրեմ, Մեկնութիւն Արարածոց

§ 282. Սակայն բարերարին ձայն արկեայ, թէ «Ո՞ւր ես, Ադամ». և նա ասէ. «Լուայ զձայն քո և երկեայ, զի գնայիք ի դրախտի աստ. քանզի մերկ էի և թաքեայ»: Տեսանե՞ս ո՞րչափ մեթափոս և ծանօթ էին Աստուծոյ, մինչ և ոտնաձայնին անգամ շինել անտեղեակ: Քանզի բարերարն յանգէտս պատճառեալ՝ նախ ոտնաձայն ասնէ. զի յոտսն բաւութիւնաբերս հասնալ մարդոյն, ինքնապատում լինելով զյանցանացն՝ փրկութիւն գտանիցէ:

Նա և ինքն բարերարն ոչ յայաննցայանկարծակի, զի մի՛ զարհուրեցին նորա. և ոչ ծագեաց որպէս և փայլակն, զի մի՛ խոտկեցէ զնոսա. այլ արար ձայն ոտից իւրոց և առաքեաց առաջի իւր, զի ուսուցէ ապաշխարութիւն անզեղչ և անապաշաւ սրտին¹⁷:

* * *

«Վարդապետութեան» 303-րդ պարբերութեան մեջ ևս Բ. Սարգիսյանը փորձում է տեսնել Եփրեմի «Արարածոց մեկնութեան» արձագանքը¹⁸, բայց այս դեպքում համեմատութիւնը ոչ թե բնագրական աղերսի, այլ հեռավոր նմանութեան տպավորութիւն է թողնում: Պատահական չէ, որ Բ. Քոմստներ նույն պարբերութիւնը բխեցնում է Հովհան Ոսկեբերանի՝ Մենդոց գրքին նվիրված մի մեկնողական ճառից¹⁹: Այնուամենայնիվ, տարակուսանքների տեղիք չտալու համար հարկ ենք համարում մեջբերել նաև խնդրո առարկա հատվածները:

Վարդապետութիւն Ս. Գրիգորի

Եփրեմ, Մեկնութիւն Արարածոց

§ 303. Իսկ առ Յակոբ որդին Իսահակայ՝ ևս սքանչելագոյն սանդղաձև երկնարերձ տեսեամբ հանդերձ ամենայն հրեշտակօր՝ Տէրն ծանուցեալ երևի, և երբեմն իրրև զայր մի սոսկագոյն՝ զիշերամարտ մենակոխ. բայց մարգարէն հրեշտակ ասէ: Զոր և կաղացուցեալ իսկ՝ աստուածատես անուամբն նշանակեալ

Այս ևս մեծ է, զի Իսրայէլ անուանեցաւ. այն զի է նա այր, որ զԱստուած ետես. ապա եթէ բնութեամբ իւրով հրեշտակ էր այն՝ որ երևեցան, սուտ եղև բանն, որ Իսրայէլն ասէ յայսմիկ, զի ոչ ետես նա զԱստուած: Թէ այդ այդպէս է, ինքն հրեշտակն Աստուած էր, և մարդն Աստուած էր. այլ մարտնչելն ասն, և

16 Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 368:

17 «Սերրոյն Եփրեմի մատենագրութիւնք», հ. 1, էջ 18—19:

18 Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 368:

19 Տե՛ս R. W. Thomson, The Teaching..., p. 57.

արձակէ, որ հանապազատեա յիշատակ զործն հրեշտակի, բայց գործին Աստուած²⁰։

* * *

347-րդ պարբերության մեջ «Վարդապետության» հեղինակը բացատրում է, թե ինչո՞ւ Աստված Մովսես մարգարեի ձեռքով սահմանեց իր օրենքները։ Ազամի մեղքի պատճառով մահը թագավորում է աշխարհում, մարդիկ շարունակ շարիքներ են գործում և թաղվում ապականության մեջ։ Ուստի Աստված հրապարակում է իր օրենքները՝ ամբարիշտներին ու անօրեններին պատժելու համար։ Մյուս կողմից, ուրբեր սրբության հետևում են այդ օրենքներին, ազատվում են մահվան սպառնալիքից։ Այս մեկնարանությունը, տեղ-տեղ նույնիսկ բառացի կերպով, բաղված է IV դարի ասորի մատենագիր Ափրահատ Իմաստունի ճառագրական ժողովածուից, որը հայ իրականության մեջ հայտնի է «Զգոն գիրք» անունով։ Հմմտ.

Վարդապետարիւն Ա. Գրիգորի

Ափրահատ

§ 347. Քանզի իբրև ետևս Աստուած զհամաշխարհագործ զմեղսն տարածեալ, և որով մահն թագաւորեալ՝ առ հասարակ կլանէր յԱզամայ մինչև ի Մովսէս, և ի մոռացոնս դարձուցեալ զկենսարեւ աւետիսն յառաջագիրս, որպէս հուր ինչ մոլեկան հրդեհի՝ որ ապականիցէ զլերինս և զղաշատ, արձակեալ այնուհետև ի ներքս զօրէնսն իբրև զհեղեղատ սաստիկ՝ շիջուցանել զայն համատարած։ Վասն որոյ և ասէն իսկ, թէ «Ամենայն որ արասցէ զայս՝ կեցցէ ի սոսին»։ զի որպէս Ազամայ, թէ ճաշակեցցէ ի ծառոյն՝ մահ սպառնացաւ, ուստի և թագաւորեաց իսկ մահ՝ նոյնպէս և զօրինացն ասաց, թէ «Որ արասցէ զայս՝ կեցցէ ի սոսին», որով և շիջաւ իսկ մահ։

Վասն անարինաց և ամբարշտաց եղեալ են արէնք։ Եւ եթէ արդարութիւն ստուգութեանն կացեալ մնացեալ էր առ մարդկան, ոչ ինչ պիտոյ էին մեղ արէնքն։ Եւ դարձեալ, եթէ ոչ արէնք եղեալ էին, զարութիւն Աստուծոյ ոչ երևեցուցանէր յամենայն աղզս զամենայն սրանչելիսս զոր եցոյց։ Յանցանելն զպատուիրանաւ Ազամայ առաջին մարդոյն, մահ եմուտ յաշխարհ և զարութիւն Աստուծոյ յայտնի եղև, և իբրև ամենայն մարդիկ յառնեն ի ծամանակի, յորում բառնալ իշխանութիւն մահու²¹։

* * *

424-րդ պարբերության մեջ, որ վերաբերում է Հովհաննու ավետարանի առաջին համարների մեկնությանը, «Վարդապետության» հեղինակը վերլուծում է աստվածային «Բան» հասկացությունը։ «Բան» ասելով, ըստ նրա, պետք է հասկանալ ոչ թե որևէ խոսք, որ արտասանելուց առաջ գոյություն չունի, իսկ արտասանելուց հետո անհետ կորչում է, այլ հետևյալը. ինչպես խոսքն է արտաբերվում խոսողի կողմից, այնպես Աստվածահոր բոլոր հրամանները ելնում են Աստվածորդու բերանից, բանի որ որդին հոր կամքի գիտակն ու իրագործողն է։ Սույն մեկնարանությունը բավականին տարածված է հայրաբանական գրականության մեջ (Որոգինես, Աթանասիոս, Բարսեղ Կեսարացի, Գրի-

²⁰ «Սրբոյն եփրեմի մատենագրութիւնք», հ. 1, էջ 97.—98։

²¹ La version arménienne des oeuvres d'Aphraate le Syrien, éd. par Guy Lafontaine, CSCO 382, 405, 423, Louvain, 1977—1980. II, 2 (Այսուհետև՝ Aphraate le Syrien)։

գոր նյութացի, Եփրեմ Ասորի)²², և դժվար է ասել, թե «Վարդապետությունը» որոշակիորեն որ աղբյուրից է բխում: Բ. Սարգիսյանի կարծիքով՝ հայ հեղինակը հետևում է Եփրեմ Ասորու «Համաբարբառ Ավետարանի մեկնությունը», թեև «գրեթէ բառ առ բառ նոյն է» նաև Բարսեղ Կեսարացու «Ի սկզբանէ էր բանն» ճառի մի հատվածը²³: Ռ. Քոմսոնը նշելով, որ հատվածի վերջամասում Եփրեմի մեկնությունը բոլորովին տարբերվում է «Վարդապետությունից», վերջինիս աղբյուր է համարում Գրիգոր Նյութացու ճառերից մեկը²⁴: «Վարդապետությունն» ու Եփրեմի «Համաբարբառի մեկնությունը» իսկապես զգալիորեն շեղվում են իրարից, ուստի դժվար է նրանց միջև բնագրական աղբյուր ենթադրել: «Վարդապետության» սույն հատվածի աղբյուրը պարզելու հարցում թերևս որոշ օգնություն կարող է ցույց տալ հայերեն թարգմանությամբ պահպանված մի այլ ասորական հուշարձան՝ Այթալահա Եղեսացու «Հովուական թուղթը», որտեղ ևս առկա է միևնույն մեկնաբանությունը: Բնագրերի առնչակցությունը ակնհերև դարձնելու նպատակով ստորև համադրաբար մեջ ենք բերում «Վարդապետության», Եփրեմ Ասորու և Այթալահա Եղեսացու համապատասխան հատվածները.

Վարդապետութիւն
Ս. Գրիգորի

§ 424. Եւ զի՞նչ իցէ որ ասէ՝ «Բանն». միթէ բարբառ լոկ իցէ, բախիւն լեզուի բնդ օդս, որ յառաջ քան զասել ասողին չէ յայտ, և յետոյ անհետ՝ չէ ի միջի: Այլ վասն այսորիկ անուանեցաւ Բան, զի որտէս բան ի բերան ասողին՝ նոյնպէս և ամենայն հրամանք Հօր կամացն ելանեն ի բերանոյ Որդոյ: Զի գիտակ է Հօր և կատարիչ կամաց նորա, որպէս և ինքրն ասէ. «Ոչ որ գիտէ զՀայր՝ եթէ ոչ Որդի. որպէս և զՈրդի ոչ որ գիտէ՝ եթէ ոչ Հայր»: Եւ դարձեալ ասէ, եթէ «Եկի կատարել զկամս այնորիկ, որ առաքեացն զիս»: Եւ դարձեալ Յովհաննէս ասէ. «ԶԱստուած որ կրեր ոչ կտես, բայց միածին Որդին, որ ի ծոց Հօր՝ նա պատմեաց»:

Եփրեմ, Մեկնութիւն
Համաբարբառի

Այլ զուցէ բան զոչդէ լսիցես, և խոնարհեցուցանիցես զնա առ ձայն, զի ձայն չէ ի սկզբանէ: Քանզի յառաջ քան զասելն չէր նա, և յետ ասելոյն դարձեալ չէ: Արդ ոչ եթէ ձայն էր նա, այն՝ որ նա ինքն էր նմանութիւն կերպարանաց հարն իրոյ. և ոչ եթէ նա ձայն հար, այլ պատկեր նորա²⁵:

Այրալահա Եղեսացի

Եւ որպէս բան՝ միշտ ի լուսեան և ի խառնել՝ յատողին իբրում է, և չիք ժամանակ թէ իցէ խառնող բանին առանց բանին իբրոյ. նոյնպէս ի բնէ և յանսկիզբն յախտեանս էր Որդի բնդ Հար և առ Հայր. ոչ իբրև զընկեր, այլ իբրև զծնունդ փառատրեալ ի ծոց Հար²⁶:

²² Հմմտ. R. W. Thomson, The Teaching..., p. 92—93.

²³ Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 382—383:

²⁴ Տե՛ս R. W. Thomson, The Teaching..., p. 93.

²⁵ Saint Ephrem, Commentaire de l'Évangile Concordant. Version arménienne. Éd. par Louis Leloir, «CSCO 137», Louvain, 1953. I, 3. Հմմտ. նաև I, 4.

²⁶ «Աթեղահայ կախկոպոսի Ուռհայի Թուղթ առ քրիստոնեայս Պարսից աշխարհին վասն հաւատոյ», աշխատասիրությունը Հ. Քորոսյանի, Վենետիկ, 1942, էջ 42:

«Վարդապետության» 433-րդ, 468-րդ և մի քանի այլ պարբերություններում Քրիստոսի մկրտության արարողությունը ներկայանում է որպես Հին և Նոր Ուխտերի միավորման արտահայտություն: Հովհաննես Մկրտիչը, լինելով Հին Ուխտի ավանդությունների՝ բաճանայության, օծության, մարգարեության և թագավորության պահապանը, մկրտության խորհրդով դրանք փոխանցում է Քրիստոսին: Այդ ավանդությունները Քրիստոսն իր հերթին փոխանցում է առաքյալներին, որոնք արժանանալով Սուրբ Հոգու շնորհին, քարոզում են Քրիստոսի ավետարանը ողջ տիեզերքում: Ըստ Բ. Սարգիսյանի՝ այս էջերը «Ոսկերեքանի Յաղագս Քահանայութեան ճառերու..., Սևերիանոսի Եմեսացոյց Գ ճառին, և կամ Ս. Եփրեմի՝ Աւետարանի մեկնութեան մէկ տեղւոյն» հետևողություն կարելի է համարել²⁷: Ավելի որոշակի և համոզիչ է Ռ. Քոմսոնի տեսակետը, որի համաձայն՝ «Վարդապետությունը» տվյալ դեպքում հետևում է Եփրեմին²⁸: Հմմտ.

Վարդապետութիւն Ս. Գրիգորի

Եփրեմ. Մեկնութիւն Համարաբարտի

§ 433. Անդ արար Մովսէս զարծաթի եղջիրն օծութեան իւրոյ, ուստի բաճանայրն և մարգարէքն և թագաւորքն օծանէին: Անդուսա զայր կարգեալ օծութիւնն մի ըստ միոջէ ըստ հրամանի իշխանութեան պատուիրանին, որ կարգեալ զայր առաջնորդութեամբ: ՅԱբրահամեան զաւակին պաշտէր խորհուրդն, զի աւանդապահքն տաչին ցմիմեանս մինչև ցՅովհաննէս՝ բաճանայ, մարգարէ և մկրտիչ. և ի նա հասեալ՝ իբրև ի ժառանգ մնացեալ: Զի ի նա հասեալ էր յառաջին նախնեացն՝ թագաւորացն, մարգարէիցն և յօծելոց բաճանայիցն՝ իբրև յաւանդապահ. և նա ետ զբաճանայութիւնն, զօծութիւնն, զմարգարէութիւնն և զթագաւորութիւնն ցՏէր մեր Յիսուս Քրիստոս:

§ 468. Եւ եղևն իսկ հիմունք առաքելայրն, և առին շնորհս բաճանայութեան և մարգարէութեան և առաքելութեան երկնաւոր խորհրդոյն գիտութեան, որ վարէր զայր յԱբրահամեան զաւակին. զոր ետ ցՏէր ժառանգութեանն աւանդապահն Յովհաննէս, և Տէր ետ առաքելոցն և զփականս արքայութեանն ետ ի ձեռս նոցա, զի ինքն իսկ Աստուածորդին էր զուտն մտողացն. վասն որոյ և մարգարէն աղաղակէր. «Այս զուտն Տեառն է, և արգարք մտանեն ընդ սա»: Արդ՝ ետ Յովհաննէս զբաճանայութիւնն և զօծութիւնն

...Քանզի Յովհաննէս զարշապար է արինացն. «աւրէնք և մարգարէք մինչև ի Յովհաննէս», այլ Քրիստոս սկիզբն է նոր կտակարանացս: Զգեցաւ նա զարգարութիւն հնոյն մկրտութեամբ, զի ընկալցի նա զկատարած աւծման, և տացէ զնա լի և բովանդակ աշակերտացն իւրոց, զի ահա աւասիկ և զմկրտութիւն Յովհաննէս արինաւրն հանդերձ սահմանեաց, և մկրտեցաւ նա արգարութեամբ, քանզի առանց մեղաց էր նա, այլ մկրտեաց նա շնորհաւոր, զի մեղաւորք էին: Լոնցոյց զաւրէնս արգարութեամբ իւրով, և զաղարեցոյց զմկրտութիւն մկրտելովն իւրով:

Բայց զարձեալ «կատարեցուք զարգարութիւնս ամենայն», զի Յովհաննէս էր ի զուտն բակին. զի ի մէջ նորա ամփոփեալ ժողովեալ էր հաւան իսրայէլացոց: Մուտ նա առ հաւան անդր ոչ իշխանութեամբ, այլ արգարութեամբ: Եւ վկայեաց Հոգին, որ հանգեաւ ի վերայ նորա ի մկրտել նորա՝ թէ նա է հովիւ. զի ընկալաւ նա ի ձեռն Յովհաննէս զբաճանայութիւն, զարքայութիւն և զմարգարէութիւն: Արդ առ նա զարքայութիւն տան Դաւթի ծննդեամբն, որ եղև ի տանէ Դաւթի. և առ զբաճանայութիւն տանն Ղեկայ երկրորդ ծննդեամբն մկրտութեամբն որդոյն Ահարոնի: Արդ այն՝ որ հաւատայ թէ ծնունդ երկրորդ լինի նժա յաշխարհի, ոչ

27 Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազգաթանգեղոս..., էջ 384:

28 R. W. Thomson, The Teaching..., p. 96.

և զմարդարեւոյնն և զթագաւորութիւնն
ցփրկիչն մեր Քրիստոս. և Քրիստոս եւ
առաքելոցն, և առաքեալքն՝ եկեղեցոյ
մանկանց:

երկմտնալ լինի յայնմանէ, թէ վերջին
ծննդեամբ մկրտութեամբն Յովաննու ա՛ն
նա զքահանայութիւն Յովաննու:²⁹

* * *

«Վարդապետութեան» բազմաթիւ պարբերություններ նվիրված են Քրիստոսի խաչելութեան գրվագի նկարագրությանը, սակայն հեղինակին կարծես հետաքրքրում է ոչ այնքան Քրիստոսի շարժարանքի բուն էությունը, որքան խաչի խորհրդանշական իմաստի բացահայտումը: Խաչը այդ առումով հակադրվում է Բաբելոնի աշտարակին: Եթե վերջինս հանդիսանում է մարդկության բաժանման, լեզուների խառնակության խորհրդանիշը, ապա խաչի միջոցով, ընդհակառակն, բաժանված ազգերն ու լեզուները միավորվում են ճշմարիտ Աստծու ճանաչողությամբ: «Զի յառաջին աշտարակէն ցրումն եղև, իսկ ի խաչէս՝ ժողով», — գրում է հեղինակը (§ 629), կամ՝ «Արդ՝ փոխանակ բարձրաբերձ և վաղաւեր աշտարակին՝ խաչն ճշմարտութեան կանգնեցաւ, որոյ զօրութիւնն մշտնջենական է, և փառք նորա Աստուած» (§ 581): Բաբելոնի աշտարակաշինությունից հետո մարդկությունը բաժանվեց 72 ազգերի՝ առաջնորդվելով նույնքան թվով նահապետների կողմից. «Եօթանասուն և երկու նահապետք լեզուաց կացեալ՝ բաժանեցան ընդ երկիր, հաստատեալք յիւրաքանչիւր սահմանս» (§ 579): Իսկ խաչելությունից հետո մարդկությունը միավորվեց 72 առաքյալների գործունեության շնորհիվ. «Որ և ըստ առաջին լեզուացն բաժանելոց ամենայն ազգաց, երևեցուցեալ եօթանասուն և երկուս, որպէս յառաջագոյն քան զայս ասացար. զի նորօք ի միաբանութիւն զառաջին պատառումն ազգացն և լեզուացն ժողովեսցէ» (§ 612)³⁰: Բաբելոնի աշտարակի և խաչի հակադրության վրա կառուցված նման մի միտք գտնում ենք Եփրեմ Ասորու «Համաբարբառ Ավետարանի մեկնութեան» մեջ. «Զոր աւրինակ ի բաժանելն այնոցիկ խափանեցաւ աշտարակն երկրաւոր և պատրաստութիւն ժամանակեան և տունն ապաւինին աշխատութեան, եւ նոցա կենարարն առ յինքենէ աշտարակ՝ որ վերացուցանէ հանէ ի բարձունս, և ծառ՝ որոյ պտուղ իւր դեղ կենաց է»³¹: Սակայն մեզ թվում է, որ Բաբելոնի աշտարակի՝ որպէս մարդկության բաժանման և խաչի՝ որպէս համախմբման խորհրդանշական բացատրությունը «Գրիգոր Լուսավորչի վարդապետութեան» հեղինակը, ամենայն հավանականությամբ, քաղել է «Վարդապետութիւն առաքելոց» անվավեր գրվածքից, որը հայերեն է թարգմանվել ասորերենից V դարի առաջին կեսին: Կարելի է մատնանշել նույնիսկ բնագրերի կապը հաստատող բառացի ընդհանրության մի դեպք.

²⁹ Saint Ephrem, Commentaire..., IV, 2—3.

³⁰ «Գրիգոր Լուսավորչի վարդապետութեան» մեջ արտացոլված խաչի խորհրդապաշտության մասին ավելի մանրամասն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, «Մուրբ Գրիգորի վարդապետութեան» արձագանքը (՝) խաչքարային արվեստի խորհրդապաշտության մեջ, «Էջմիածին», 1984, № 4, էջ 47—51:

³¹ Saint Ephrem, Commentaire..., XIV, 2.

Վարդապետութիւն Ս. Գրիգորի

Վարդապետութիւն առաքելոց

§ 629. ...դի յառաջին աշտարակէն
ցրումն եղի, իսկ ի խաշէս՝ ծողով:

...որպէս յաշտարակէն ցրումն, նոյն-
պէս ի խաշէն ծողովումն³²:

* * *

«Վարդապետության» 641—658-րդ պարբերություններն զբաղեցնող մեռ-
յալների հարության ճառը կազմում է մի ամբողջական ստեղծագործություն,
որտեղ բանաստեղծական շնչով և գունեղ պատկերավորությամբ նկարագրվում
է բնության զարնանային զարթոնքը, բույսերի, ծառերի, ծաղիկների ծլարծա-
կումը, երամ-երամ թռչունների վերադարձը: Մեռյալների հարությունը համե-
մատվում է, ահա, բնական այս երևույթի հետ. ինչպես բույսերը, ծառերն ու
ծաղիկները զարնանը վերստանում են իրենց տեսքը, գույնը և բուրմունքը, այն-
պես և մեռյալները, հարություն առնելով, վերստանում են իրենց կերպարանքն
ու հոգին: Բացառված չէ, որ հայ հեղինակը, այս էջերը գրելիս, ներշնչվել է
Եվսեբիոս Եմեսացու «Արարածոց մեկնության» հետևյալ հատվածից. «Եւ երեք
թէ զարնանի ա՛ն սկիզբն աշխարհս լինելոյ, բանդի յայնժամ բուսանի ամե-
նայն ինչ և ծաղկի: Զի զարնանի իսկ և Փրկիչն խաշեցաւ, և ի նմին ժամանակի
նորոգեաց զաշխարհս. յայնժամ կոշեաց վերստին և զմարդիկ, յորժամ Ադամն
իսկ եղև և մեղան, յայնս ուստի վրիպեցաքն»³³:

648-րդ պարբերության մեջ նկարագրվում է հարություն առնող մարմին-
ների վերականգնման ընթացքը, որը համապատասխանում է Եզեկիելի մար-
գարեության ԼԷ, 8 համարին: Սակայն համեմատությունը ցույց է տալիս, որ
ավելի բառացի է «Վարդապետության» և Ափրահատի հայերեն թարգմանու-
թյան համապատասխանությունը: Այսպես.

Վարդապետութիւն
Ս. Գրիգորի

Ափրահատ

Եզեկիել ԼԷ, 8

§ 648. ...Զի միանգա-
մայն կազմիցին զոսկերօքն
շորացելովք՝ միսքն և շիղ-
բքն և աճառքն և նեարդքն,
մորքովն զգեցեալք և մա-
զովն զարդարեալք:

...Տեսանէր զի նեարդք և
շիղք յաղիւքն պատէին և ա-
մենայն ոսկերքն ցամաքեալք
մարմնով լնուին և ամենայն
մարմինն մորքով զգենուին
և մորքն զգեցեալ մազով
զարդարէին³⁴:

...Եւ ահա շիղք, և մար-
մինք պատէին, և ձգէր ի
վերայ նոցա մորք:

* * *

668—670-րդ պարբերություններում, ինչպես նաև «Վարդապետության»
մի բանի այլ դրվագներում շոշափվում է մարդկության պատմության շրջանա-
բաժանումների հարցը: Աստվածորդին, ըստ հեղինակի, երկնքից իջել է մարդ-

³² «Կանոնագիրք Հայոց», հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 63:

³³ Եսեբիոս Եմեսացի, Մեկնութիւնք Ռեթամատեան զրոց Աստուածաշնչին, աշխատասիրու-
թյամբ Վ. Հովհաննիսյանի, Վենետիկ, 1980, էջ 15: Մեկնությունը հայերեն է թարգմանվել հու-
նարենից V դ. առաջին կեսին. տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Եվսեբիոս Եմեսացու «Ռեթամատյանի
մեկնությունը» և թարգմանության տեսության հարցերը V դարի հայ մատենագրության մեջ,
«Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 4, էջ 56—68:

³⁴ Aphraate le Syrien, VIII, 12.

կուսից պատմութիւն վեցերորդ հազարամյակում, որը արարածների նորոգման և աշխարհի վախճանի դարաշրջանն է, իսկ յոթերորդ հազարամյակը նախատեսված է արդարների հանգստի համար: Ինչպես տեսնում ենք, մարդկուսից պատմութիւն պարբերացումը կատարված է արարչության ընթացքի համեմատ, որի յուրաքանչյուր օրվան համապատասխանում է մեկ հազարամյակ:

Ռ. Քոմստնի կարծիքով՝ հայ հեղինակն այս հարցում հետևում է Իրենեոս Լուզգոնացու կողմից հաստատված ավանդութիւնը³⁵: Իսկապես, Իրենեոսի «Ընդդէմ հերձուածոց» աշխատութիւն 5-րդ գրքում գտնում ենք հետևյալը. «Քանզի որքան աւուրքք եղև աշխարհս, այսքան հազարամաք յանգ ելանէ. և վասն այսորիկ ասէ գիր կինելութեանն. «Եւ կատարեցան երկինք և երկիր և ամենայն զարդ նոցա: Եւ կատարեաց Աստուած յաւուրն վեցերորդում զգործան իւր, զոր արար, և զաղարեաց Աստուած յաւուրն եւթներորդում յամենայն գործոցն, որոց արար»: Եւ է սա յառաջ եղելոցն պատմութիւն, որպէս եղև, և լինելոցն մարգարէութիւն. քանզի եթէ ար Տեառն իբրև զհազար ամք, և ի վեց աւուրս կատարեցան եղևալքն, երևելի է, զի կատարելութիւն նոցա վեց հազարեան ամն է»³⁶:

Սակայն մեզ թվում է, որ «Վարդապետութիւն» հեղինակը նշված գաղափարը կարող էր քաղել Ափրահատ Զգոնի ճառերի ժողովածուից, որտեղ այն նույնպես ձևակերպված է բավականին հստակ կերպով: Ուշագրավ է մանավանդ այն հանգամանքը, որ և՛ Ափրահատը, և՛ «Վարդապետութիւնը» օրվա ու հազարամյակի համապատասխանութիւնը հիմնավորում են Սաղմոսներից մեջրերված միևնույն մտքի օգնութիւնը (Սաղմ. 2Թ, 4): Հմտ.

Վարդապետութիւն Ս. Գրիգորի

Ափրահատ

§ 668 ...Այլ դարաշրջանի ժամանակն, զոր արկն ընդ վեցօրեայ թուով, զի յայտնի լիցի մեծութիւն իւր՝ սոյն օրինակ կշռեաց վեց հազար ամ ժամանակի՝ ցատց քրտանց հոգոց աշխատութեանց երկրի. մի մի հազար ամաց՝ աս օր մի կշռեալ ըստ վեց աւուրն առաջնոյ, յորում լիցին ծնունդք և սերունդք բազմաց, ունդք լինելութեան:

§ 669. Յորում և փորձութիւնք հանդիսի լաւացն՝ զործնեցէ զընտրութիւն հատուցմանցն, պարզեառու խոստմանցն ակնկալութեանց, ժուժկալութեանց արդարոցն նեղութեանց, որ և բովք ի շարաթութեան ամացն աշխատութեանց. զոր և մարգարէն գոչեաց յամենեպն, ազգեցոյց

Այսպէս գրեալ է ի Դաւիթ ի սաղմոսին իննսներորդի. «Հազար ամ յաչս տեառն իբրև դար երեկի զի անցանէ»: Զի և վարդապետք մեր իմաստունք այսպէս ասեն, թէ ի նմանութիւն վեց աւուր եղեալ է զաշխարհս Աստուծոյ, և ի կատարածի վեց հազար ամին լուծանի աշխարհս և լինի շարաթն Աստուծոյ ի նմանութիւն աւուրցն շարաթու՝ որ է զկնի վեց աւուր. որպէս մեկնեաց և եցոյց մեկ փրկիչն մեր վասն աւուրն շարաթու, այսպէս ասէ. «Յաղամս կացէր, զի մի լիցի փախուստ ձմերանի և մի յաւուր շարաթու»: Եւ առարեալ դարձեալ ասէ. «Յարդ ևս կայ շարաթն Աստուծոյ. յաւժարելի

³⁵ St. R. W. Thomson, The Teaching..., p. 166.

³⁶ Irenaeus, Gegen die Häretiker. Buch IV u. V. In armenischer Version entdeckt von K. Ter-Mekeritschian, herausgegeben von E. Ter-Minassiantz, Leipzig, 1910, V, 28, 3.

և ասէ. «Հազար ամ յաշս Տեառն՝ իբրև օր մի զի անցանէ»:

§ 670. Զի յառաջնումն՝ սկիզբն, և ի վեցերորդումն՝ նորոգումն, զոր արար իւրով զայստեամբն, և զէջս Հոգւոյն պարզեակաց. և ի սմին հազարի՝ վախճան, վասն որոյ և յեաին կոչի, յորում զարձեալ միսանդամ զալոց է, և զեօթներորդ աւուրն խորհուրդ ժամանակի, զառանց թուոյն և զառանց շափոյն զհանգիստն և զպարզեն, ընդ նմին բերելոց է. իսկ քանզի ինքն իւրոյ արարչութեանն զօրն եօթներորդ հանգիստ կոչէ՝ վասն այսորիկ և զօրն եօթներորդ սուրբ և փափուկ ունել պատուիրէ, զի ամենայն որ ծանուցեալ զօրն փափուկութեան հանգստին Արարչին՝ պատուեսցեն: Զի ընդ այսորիկ յեօթներորդ զարուն հանգուսցէ զաշխատեալսն, որ աշխատեցան ի վեցդարեան յիւրեանց ժամանակին. իբրև այն եթէ ընդ նմա աշխատեցան յիւրեանց ժամանակին՝ սոյնպէս ընդ նմին հանգիցեն յայն յերկայն ամին յանշափութեան անդ և ընդ նմին ուրախ լիցին:

լիցուք այսուհետև մտանել ի հանգիստ անդր»³⁷:

* * *

Այսքանով, ըստ երևույթին, շեն սահմանափակվում «Գրիգոր Լուսավորչի վարդապետության» և ասորական գրական աղբյուրների միջև եղած ընդհանրությունները: Հետագա պրպտումներն, անտարակույս, նորանոր փաստեր կարող են ի հայտ բերել այդ ուղղությամբ³⁸: Սակայն եղածն էլ բավական է պատկերացնելու համար, թե ասորական աղբյուրներն ինչպիսի կարևոր նշանակություն են ունեցել հայ մատենագրության հնագույն հուշարձաններից մեկի ստեղծման գործում:

Ինչպես կարելի էր նկատել վերը նշված բնագրական զուգադրումներից, «Վարդապետության» հեղինակը ստրկորեն չի հետևում իր օգտագործած աղբյուրներին: Որպես սկզբունք նա համապատասխան աղբյուրից վերցնում է որևէ միտք և զարգացնում ու ճոխացնում այն նորանոր մանրամասներով ու սեփական դատողություններով: Պատահական չէ, որ «Վարդապետության» մեջ համարյա ոչ մի աղբյուրի հետ բառացի համընկնող բիշ թե շատ ծավալուն հատված չենք գտնում: Աղբյուրներից օգտվելու հեղինակի կիրառած եղանակը և «Վարդապետության» ստեղծման շարժառիթը, մեր կարծիքով, ճիշտ է ներկայացված Բ. Սարգիսյանի հետևյալ գնահատականի մեջ. «Հեղինակը թէ և

³⁷ *Aphraate le Syrien*, II, 14.

³⁸ Բ. Թոմսոնը «Վարդապետության» տարբեր պարբերությունների առիթով, ի շարս հայրաբանական գրականության այլևայլ ներկայացուցիչների, որոշ զուգահեռներ է մատնանշում նաև ասորի հեղինակների մոտ (հմմտ. *R. W. Thomson, The Teaching...*, § 267, 369, 378, 379, 443, 510, 529, 546, 638, 643): Բացի այդ նա ցույց է տալիս նաև «Վարդապետության» մեջ տեղ գտած ասորաբանությունների առանձին հետքեր (հմմտ. § 269, 315, 345, 360, 376, 386, 406, 588, 663):

նիւթապէս Ս. Գրոց պատմութեան ընթացիցը կը թուի հետեւել, բայց նորա գրութաւոր նպատակն է Լուսաւորչայ համառօտ վարդապետութեան³⁹ գործադրական մասունքն՝ անկէ վերջ եկող մեծանուն սուրբ Հարցն Եփրեմի, Բարսղի, Նագիանդացոյ, Նիւսացոյն և այլոց հաստահիմն վարդապետութեամբք և իրեն յատուկ ոճով ճոխացնել և իւր ազգակցաց համար Կիւրեղներու Կոչումն ընծայութեան և Պարապման գրոց նման վարդապետարան մի պատրաստել⁴⁰:

«Վարդապետութեան» աղբյուրների հարցը, բացի բուն հուշարձանի պատմութեան ուսումնասիրման տեսակետից, կարևոր նշանակություն ունի նաև ընդհանրապես հայ մատենագրութեան հնագույն շրջանի ժամանակագրությունը պարզելու համար: Քանի որ «Վարդապետությունն», ինչպես վերը նշվեց, ստուգապես թվագրվում է V դարի առաջին կեսով, ապա նրա աղբյուրները պետք է գոյություն ունեցած լինեն դրանից առաջ: Այդ հիման վրա կարելի է պնդել, իհարկե նկատի ունենալով նաև մի շարք այլ հանգամանքներ, որ բացահայտված ասորական աղբյուրները, այսինքն՝ Եփրեմի մեկնությունները, Ափրահատի ճառագրական ժողովածուն, «Վարդապետութիւն առաքելոց» անվավեր գրվածքը և Այթալահա Եղիսացու «Հովուական թուղթը» հայերեն են թարգմանվել «Վարդապետութեան» գրութեան ժամանակից առաջ: Անշուշտ, չպետք է անտեսել Թ. Թոմսոնի այն տեսակետը, որի համաձայն՝ հայ հեղինակը կարող էր օգտված լինել ուղղակի հունարեն և ասորերեն բնագրերից⁴¹: Սակայն այն փաստը, որ «Վարդապետութեան» և ասորական աղբյուրների միջև առայժմ բացահայտված բոլոր ընդհանրություններն էլ առկա են հայերեն թարգմանություններում, հիմք է տալիս մտածելու, որ հեղինակն այնուամենայնիվ իր ձեռքի տակ ունեցել է հայերեն բնագրեր:

Л. А. ТЕР-ПЕТРОСЯН

СИРИЙСКИЕ ИСТОЧНИКИ «УЧЕНИЯ ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ»

Резюме

«Учение Григория Просветителя» является одним из древнейших памятников армянской литературы. По мнению большинства исследователей, оно создано в первой половине V в. основателем армянской письменности Месропом Маштоцем. В основу «Учения» легли многие теоретические положения патристики в области богословия и экзегезы.

Цель настоящей публикации — показать, что одним из основных источников «Учения» была сирийская патристика — произведения Афраата, Айталахи Эдесского, Ефрема Сирина, а также апокрифическое сочинение «Учение апостолов».

³⁹ Նկատի ունի Լուսավորչի մի համառօտ վարդապետական քարտզը, որն ընդգրկված է Ազաթանգեղոսի «Պատմութեան» առաջին գրքում, § 226—258:

⁴⁰ Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 370—371:

⁴¹ S^h'u R. W. Thomson, The Teaching..., p. 35.

L. H. TER-PÉTROSSIAN

LES SOURCES SYRIAQUES DE LA "CATECHÈSE DE GREGOIRE
L'ILLUMINATEUR"

R é s u m é

La "Catéchèse de Grégoire l'Illuminateur" est l'une des oeuvres les plus anciennes de la littérature arménienne. De l'avis de la plupart des chercheurs, elle a été rédigée à la première moitié du Ve s. par Mesrop Machtotz, créateur de l'alphabet arménien. La "Catéchèse" est basée sur de nombreux principes théoriques de la patristique dans le domaine de la théologie et de l'exégèse.

Le but de la présente publication est de montrer que l'une des principales sources nourrissant la "Catéchèse" est la patristique syriacque, en particulier les oeuvres d'Aphraate, d'Aytallaha d'Edesse, d'Ephrem le Syrien, ainsi que l'ouvrage apocryphe intitulé "Doctrine des Apôtres".